ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 սեպտեմբերի 2023թվականի N 1060

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24- րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Ռոբերտ Հովհաննեսի Հովհաննիսյանի 2023 թվականի մարտի 1-ի դիմումը, 1987 թվականի մայիսի 22-ի անհատական բնակելի տան տեխնիկական պասպորտը, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023F6GU6G ծածկագիրը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Օրինական ճանաչել Ռոբերտ Հովհաննեսի Հովհաննիսյանին պատկանող Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի 199/2 հասցեում գտնվող 504.0 քմ հողամասում ինքնակամ կառուցված 3.56 քմ մակերեսով աստիճանավանդակը, ինքնակամ կառուցված 19.50 քմ և 16.44 քմ մակերեսներով բաց պատշգամբները:
2.Հողամասի սահմանները որոշվում են ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
3.Ռոբերտ Հովհաննեսի Հովհաննիսյանին պատկանող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հրազդան համայնք, Հարավային թաղամաս 199/2:
4.Բնակելի տան ինքնակամ կառուցված աստիճանավանդակը, ինքնակամ կառուցված բաց պատշգամբները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարները չեն գանձվում:
5.Բնակելի տան ինքնակամ կառուցված աստիճանավանդակի, ինքնակամ կառուցված

բաց պատշգամբների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

6.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

13 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 սեպտեմբերի 2023թվականի N 1061

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՃԵՂՆԱՀԱՐԿԻ, ԵՐՐՈՐԴ ՀԱՐԿԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված կարգով, հիմք ընդունելով «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված շինության հատակագիծը և Մյասնիկ Կոստանյանի լիազորված անձ Հայկ Վերդյանի 2023 թվականի սեպտեմբերի 1-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 316 շենքի թիվ 5 բնակարանի բնակիչ Մյասնիկ Արշալույսի Կոստանյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 22112018-07-0080, գաղտնաբառ՝ UZCJU9GPMIWX) Հրազդան քաղաքի Մ.Բաղրամյան թաղամասի Զ.Անդրանիկի պողոտա 130 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասում գտնվող հասարակական սպասարկման օբյեկտի 92.47քմ մակերեսով երրորդ հարկի և 154.79քմ մակերեսով ճեղնահարկի գործառական նշանակությունը փոփոխել բնակելիի՝ բնակելի տան:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

13 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 սեպտեմբերի 2023թվականի N 1062

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՏՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումով, հիմք ընդունելով Գոհար Հակոբյանի 2023 թվականի սեպտեմբերի 4-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Գոհար Հակոբյանին Հրազդան համայնքի ղեկավարի կողմից 2021 թվականի հոկտեմբերի 15-ի N 1383 որոշմամբ տրված N 71 շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգել մինչև 2024 թվականի սեպտեմբերի 13-ը:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

13 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 սեպտեմբերի 2023թվականի N 1063

0.024 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված հավելվածով և 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 6-րդ բաժնով, հիմք ընդունելով Խորեն Գալստյանի 2023 թվականի սեպտեմբերի 1-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 255 շենքի թիվ 41 բնակարանի բնակիչ Խորեն Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 26072023-07-0197, գաղտնաբառ՝ GBMU7MQBEK4D) Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Պուրակային փողոց 15/16 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0.024հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական կառուցապատման:
2.Համաձայնեցնել կառուցապատող Խորեն Գալստյանի նախագծային փաստաթղթերը և տալ շինարարության թույլտվություն Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի Պուրակային փողոց 15/16 հասցեում գտնվող հողամասում (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 26072023-07-0197, գաղտնաբառ՝ GBMU7MQBEK4D) առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքի կառուցման համար՝ համաձայն հավելվածի:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

13 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՁԵ N 2-3
ՀԱՎԵԼՎԱԾ
Հրազդան համայնքի ղեկավարի
2023թ.սեպտեմբերի 13-ի N որոշման
1063

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ՀՐԱԶԴԱՆ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

N 99 13 սեպտեմբեր 2023թ

Տրված է կառուցապատող **ԽՈՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ, ՀՀ, ԿՈՏԱՅՔ, ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք. ՀՐԱԶԴԱՆ, Միկրոշրջան , 255 , 41**
(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը

Կոտայքի մարզ, ք.Հրազդան, Միկրոշրջան թաղամասի Պուրակային փողոց 15/16 հասցեում
ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենք, միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիա), 19.8x11.8մ հատակագծային չափերի միահարկ շինություն, օբյեկտի
(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

կառուցման շինարարական աշխատանքների կատարման, այդ թվում՝
(նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուղեղացման և այլն)

կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի վրա նշված ոչ հիմնական կառույցների _____ տեղադրման համար:
(նշվում են ոչ հիմնական կառույցների անվանումները)

1.Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝
1)մշակվել են **«ՍՄ ՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ**
(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը,

ՔՊԼ 17944, ՃԲԴ-Ա-047, ԿԲԴ-Ա-018 կողմից,
լիցենզիայի համարը)

2)ստացել է (են) .թ. N .փորձագիտական դրական եզրակացությունը (եզրակացությունները) _____
(նշել փորձաքննության տեսակը)

_____ կողմից
(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի համարը)

կամ նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝ **30/08/2023 թ. N**
(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համար)

3)սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների **ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ , 13/09/2023 թ.** հետ:
(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2.Շինարարական աշխատանքներն իրականացնել **13 սեպտեմբեր 2023 - 13 սեպտեմբեր 2025** ընթացքում:
(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:
2.1.Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝
[ ] ավարտական ակտի տրամադրումից մեկ ամսվա ընթացքում,
[ ] ավարտական ակտի տրամադրման օրը:
3.Շինարարության վարման մատյանը բաղկացած է էջից, կարված և դրոշմակնքված է կողմից:
4.Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են
(լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում)

_____ կողմից
(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի _____ և այլ
(նշել իրավասու մարմնի անվանումը)

շահագրգիռ մարմինների _____ հետ:
(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5.Հատուկ պայմաններ՝
1)Կառուցապատողը նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.
2)Շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.
3)(լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում) սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը
_____
(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6.(լրացվում է N1 հավելվածի 13-րդ կետով սահմանված դեպքերում)
Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության

(շինությունների) _____ քանդման՝
(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին) _____
(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)

տրված սույն թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է:
Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7.Այլ պայմաններ _____
(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8.Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկացնում է իրավասու մարմնին:
9.Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 սեպտեմբերի 2023թվականի N 1064

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N 208-Ն որոշման հավելվածը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.
1)օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի՝ 4/չորս/ հատ,
2)օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի՝ 4/չորս/ հատ,
3)արտաքին գովազդի տեղադրում՝ 3/երեք/ հատ,
4) օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում՝ 1/մեկ/ հատ,
5)հանրային սննդի կազմակերպում՝ 1/մեկ/ հատ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

13 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2023 թ. սեպտեմբեր 13-ի
N 1064 որոշման

ՑՈՒՑԱԿ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Հ/Հ	Իրավաբանակն անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպաիրավական տեսակը	Իրավաբանական հասցե	Գործունեության հասցե	Տեղական տուրքի տեսակը	Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ	Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը
1.	Ա/Ձ «Ռոմելա Վարդանյան»	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 32/130	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 201/1	ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք	մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար
2.	Ա/Ձ «Ռոմելա Վարդանյան»	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 32/130	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 201/1	ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք	մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար
3.	Ա/Ձ «Քրիստինե Շահվալադյան»	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 218/17	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 14 փողոց 34 խանութ	ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք	մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար
4.	Ա/Ձ «Քրիստինե Շահվալադյան»	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 218/17	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 14 փողոց 34 խանութ	ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք	մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար

5.	Ա/Ձ «Մարիամ Խաչատրյան»	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 15/28	Ք. Հրազդան, Մի[illegible]ոշրջան թ-ս 6-րդ փողոց 37 խանութ	ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք	մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար
6.	Ա/Ձ «Մարիամ Խաչատրյան»	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 15/28	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 6-րդ փողոց 37 խանութ	ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք	մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար
7.	Ա/Ձ «Ռոբերտ Նազարյան»	Ք. Հրազդան, Շահումյան փողոց, տուն 151Ա	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 221 շենք	ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք	մինչև 200 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար
8.	Ա/Ձ «Ռոբերտ Նազարյան»	Ք. Հրազդան, Շահումյան փողոց, տուն 151Ա	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 221 շենք	ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք	մինչև 200 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար
9.	Ա/Ձ «Հերմինե Դավթյան»	Ք. Հրազդան, Ջրառատ 406	Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի 152 հարող տարածք	ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում	մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար
10.	Ա/Ձ «Հերմինե Դավթյան»	Ք. Հրազդան, Ջրառատ 406	Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի 152 հարող տարածք	հանրային սննդի կազմակերպում	մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար
11.	«Պրոֆտեստ» ՍՊԸ	Ք. Երևան	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս Պուրակային 38	արտաքին գովազդի տեղադրում	4 քառ/մ	2023 թվականի սեպտեմբեր ամսվա
12.	«Ֆասթ Բանկ» ՍՊԸ	Ք. Երևան	Ք. Հրազդան, Բաղրամյան թ., Անդրանիկի114Հրազդան մ/ճ	արտաքին գովազդի տեղադրում	16.8 քառ/մ	2023 թվականի սեպտեմբեր ամսվա
13.	Ա/Ձ «Նելլի Մեսրոպյան»	Արմավիր Փարաքար տուն9	Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի 94	արտաքին գովազդի տեղադրում	1 քառ/մ	2023 թվականի սեպտեմբեր ամսվա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 սեպտեմբերի 2023թվականի N 1065

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 237-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N 920-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածով և հիմք ընդունելով Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Խանջյան փողոցի 42 տան բնակիչ Սերգեյ Եղիազարյանի 2023թ. սեպտեմբերի 12-ի N 7640 դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հրազդանի համայնքապետարանի 900125002544 հաշվեհամարին որպես անշարժ գույքի հարկ վճարված գումարից 37022 /երեսունյոթ հազար քսաներկու/ դրամը հետ վերադարձնել Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Խանջյան փողոցի 42 տան բնակիչ Սերգեյ Եղիազարյանին՝ առաջացած գերավճարի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

14 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 սեպտեմբերի 2023թվականի N 1066

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Միտյա Խուրշուդյանի 2023 թվականի սեպտեմբերի 12-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Կոտայքի մարզի Քաղսի գյուղի 10-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 7 տան բնակիչ Միտյա Խուրշուդյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 16062023-07-0080, գաղտնաբառ՝ 7SNB8NW8TNYS) Հրազդան համայնքի Քաղսի գյուղում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Քաղսի, 1-ին փողոց 62/1:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

14 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 սեպտեմբերի 2023թվականի N 1067

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ և 8-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Ալվինա Ասատրյանի 2023 թվականի սեպտեմբերի 11-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Երիտասարդական փողոց թիվ 112 տան բնակիչ Ալվինա Ասատրյանին կառուցապատման իրավունքով տրամադրված (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 13122012-07-0463, տրված՝ 2012 թվականի դեկտեմբերի 13-ին) Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 34-րդ շենքին հարող տարածք թիվ 1/3 հասցեում գտնվող հողամասի հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 34/9 հասցեով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

14 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 սեպտեմբերի 2023թվականի N 1068

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Աիդա Մարտիրոսյանի 2023 թվականի սեպտեմբերի 13-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Կոտայքի մարզի Քաղսի գյուղի 2-րդ փողոց, 3-րդ փակուղի թիվ 9 տան բնակիչ Աիդա Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական N 2525877, տրված՝ 2007 թվականի հոկտեմբերի 15-ին) Հրազդան համայնքի Քաղսի գյուղում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Քաղսի, 2-րդ փողոց 8:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

14 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 սեպտեմբերի 2023թվականի N 1069

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N 20 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի 7 մկրշ. 1 թաղամաս 163 տան բնակչուհի Նունե Լևոնի Մխոյանին 2023 թվականի ապրիլի 11-ին տրամադրվել է N 20 շինարարության թույլտվություն՝ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Սոլակ բնակավայրի 13-րդ թաղամաս 10 հասցեում ավտոգազալիցքավորման ճնշակայանի կառուցման համար: Շինարարության թույլտվությամբ նախատեսվել է շինարարական աշխատանքները իրականացնել մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը:

Դեռևս 2023 թվականի օգոստոսի 14-ին Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ՝ Գուրգեն Հակոբյանի կողմից կազմվել է արձանագրություն՝ վերը նշված շինարարության թույլտվության առկայության պայմաններում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով պայմանավորված:

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի դրույթներով կառուցապատողը Հրազդան համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 25-ի N 996 որոշմամբ ենթարկվել է վարչական պատասխանատվության:

2023 թվականի սեպտեմբերի 12-ին համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ՝ Գուրգեն Հակոբյանը զեկուցագիր է ներկայացրել Հրազդան համայնքի ղեկավարին և հայտնել, որ Հրազդան համայնքի Սոլակ բնակավայրի 13-րդ թաղամաս 10 հասցեում շինարարական աշխատանքները կրկին շարունակվում են և բազմիցս բանավոր կառուցապատողին ներկայացվել է խախտումների մասին, մասնավորապես՝ շինարարական հրապարակի կահավարումը ամբողջական չէ, բացակայում է ցանկապատը, պահպանված չեն բնակավայրից դուրս տարածքներում ճանապարհների կողային տեսանելիության պահանջները միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների համար: Համայնքապետարան չեն ներկայացվել լրամշակված նախագծային փոփոխություններ: Ուստի խնդրել է հիմք ընդունելով հայտնաբերված խախտումները՝ կասեցնել տրամադրված շինարարության

թույլտվությունը՝ մինչև խախտումների վերացումը: Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝ վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջը, դրանից բխող անհրաժեշտությունը կամ օրենքով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորությունը: Նույն օրենքի 29.1-րդ հոդվածի 2-րդ մասով՝ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին օրենքով սահմանված կարգով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է:

«Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» և «գ» կետերի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են՝ ա) կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան (բացառությամբ սույն հոդվածի երրորդ պարբերության «ե» և «ե.1» կետերով նախատեսված դեպքերի), շինարարության թույլտվության հիման վրա, գ) քաղաքաշինական գործունեություն (բացառությամբ սույն օրենքի 23 հոդվածով սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) իրականացնել բացառապես հաստատված քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան: Նույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը: Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն ինչպես նոր կառուցապատվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:

Տվյալ պարագայում կառուցապատողը Հրազդան համայնքի Սոլակ բնակավայր, 13-րդ թաղամաս, 10 հասցեում տրամադրված թույլտվության պայմաններում շինարարական աշխատանքները իրականացնել է մի շարք խախտումներով, ուստի անհրաժեշտ է կասեցնել տրամադրված շինարարության թույլտվությունը մինչև հայտնաբերված խախտումների վերացումը:

Ուստի վարչական մարմինը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 34-րդ և 29.1-րդ հոդվածներով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ՝ Գուրգեն Հակոբյանի 2023 թվականի սեպտեմբերի 12-ի զեկուցագիրը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Կասեցնել Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, Սոլակ, 13-րդ թաղամաս, թիվ 10 հասցեում կառուցապատող Նունե Մխոյանին տրված Հրազդան համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 11-ի N 20 շինարարության թույլտվությունը:
2.Շինարարության թույլտվությունը կասեցնել մինչև հայտնաբերված խախտումների

վերացումը:
3.Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Գուրգեն Հակոբյանին:
4.Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նունե Մխոյանին պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

14 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 սեպտեմբերի 2023թվականի N 1070

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6-Ի N 1041 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 6-ի «Բնակելի տան հասցեն փոփոխելու և բնակելի տան բաժանվող մասերին հասցե տրամադրելու մասին» N 1041 որոշման առաջին և երկրորդ կետերում «քաղաք Հրազդան» բառերից հետո լրացնել «Հարավային թաղամասի Ե.» բառերը:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

15 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 սեպտեմբերի 2023թվականի N 1071

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Ֆրունզիկ Սիմոնյանի 2023 թվականի սեպտեմբերի 14-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Կոտայքի մարզի Սոլակ գյուղի 1-ին փողոցի թիվ 1 տան բնակիչ Ֆրունզիկ Սիմոնյանին պատկանող /Կոտայքի մարզի Սոլակի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 03. ապրիլ 1992թ. թիվ 3 որոշում/ Հրազդան համայնքի Սոլակ գյուղում գտնվող հողամասին (ծածկագիր՝ 07-060-0053-0005) տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Սոլակ, 5-րդ փողոց, 9-րդ նրբանցք 7:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

15 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 սեպտեմբերի 2023թվականի N 1072

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԲԱԺԱՆՎՈՂ ՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ, 7-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Քերոբ Հարությունյանի 2023 թվականի սեպտեմբերի 4-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ռաֆֆու փողոց թիվ 56 տան բնակիչ Քերոբ Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 09072019-07-0068, գաղտնաբառ՝ 7MYCBRPSF8WB/ Հրազդան քաղաքի Ռաֆֆու փողոց 56 հասցեում գտնվող բնակելի տան 0.08080հա մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Ռաֆֆու փողոց 56/1, իսկ 0.02240 հա մակերեսով մասինը թողնել նույնը՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Ռաֆֆու փողոց 56:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

15 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 սեպտեմբերի 2023թվականի N 1073

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱԹՍԱՅԱՏԱՆ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24- րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջներովև հիմք ընդունելով Ռուզաննա Ռաֆիկի Ալեքսանյանի 2023 թվականի սեպտեմբերի 15-ի դիմումը, «Կոտայքի մարզ» նոտարական տարածքի նոտարի կողմից 2011 թվականի հունիսի 22-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ գրանցված սեղանամատյան թիվ 2085 ժառանգական գործ թիվ 2085, 1986 թվականի հունիսի 26-ի անհատական բնակելի տան տեխնիկական պասպորտը, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023UKBCTL ծածկագիրը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Օրինական ճանաչել Ռուզաննա Ռաֆիկի Ալեքսանյանին, Վահե Արմենի Հախվերդյանին և Արման Արմենի Հախվերդյանին պատկանող Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ռաֆֆու 52 հասցեում գտնվող 600.0 քմ հողամասում ինքնակամ կառուցված 220.6 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, ինքնակամ կառուցված 9.46 քմ արտաքին մակերեսով կաթսայատունը, ինքնակամ կառուցված 129.53 քմ արտաքին մակերեսով անասնաշենքը:
2.Հողամասի սահմանները որոշվում են «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
3.Ինքնակամ կառուցված բնակելի տունը, ինքնակամ կառուցված կաթսայատունը, ինքնակամ կառուցված անասնաշենքը կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը,

օրինականացման համար նախատեսված վճարները չեն գանձվում:
4.Ինքնակամ կառուցված բնակելի տան, ինքնակամ կառուցված կաթսայատան, ինքնակամ կառուցված անասնաշենքի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
5.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:
6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

18 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 սեպտեմբերի 2023թվականի N 1074

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24- րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Փառանձեմ Պատվականի Վարդանյանի 2023 թվականի մայիսի 25-ի դիմումը, «Կոտայքի մարզ» նոտարական տարածքի նոտարի կողմից 2023 թվականի մարտի 24-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ գրանցված սեղանամատյան թիվ 1121, 1122, 1123 ժառանգական գործ թիվ 80, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 20238Q7EWN ծածկագիրը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Օրինական ճանաչել Փառանձեմ Պատվականի Վարդանյանին (ծնված 12.04.1960 թվականին), Մանիկ Վաչագանի Սարուխանյանին (ծնված 01.04.1956 թվականին), պատկանող Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Հարավային թաղամաս 282/5 հասցեում գտնվող 600.0 քմ հողամասում ինքնակամ կառուցված 120.88 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, ինքնակամ կառուցված 91.95 քմ արտաքին մակերեսով անասնաշենքը, ինքնակամ կառուցված 30.24 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը:
2.Հողամասի սահմանները որոշվում են ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
3. Փառանձեմ Պատվականի Վարդանյանին, Մանիկ Վաչագանի Սարուխանյանին պատկանող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հրազդան համայնք, Հարավային թաղամաս 282/5:

4.Ինքնակամ կառուցված բնակելի տունը, ինքնակամ կառուցված անասնաշենքը, ինքնակամ կառուցված ավտոտնակը կառուցվելեն մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարները չեն գանձվում:
5.Ինքնակամ կառուցված բնակելի տան, ինքնակամ կառուցված անասնաշենքի, ինքնակամ կառուցված ավտոտնակի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
6.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:
7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

18 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 սեպտեմբերի 2023թվականի N 1075

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.015ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն և N1920-Ն որոշումները, Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի Հրազդան համայնքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ 2023 թվականի օգոստոսի 1-ի N73 դրական եզրակացությունը, Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ի N 161 որոշումը և «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերության տեխնիկական տնօրեն Գ. Գևորգյանի 2023 թվականի մարտի 27-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ Հրազդան համայնքի գյուղ Քաղսի 5-րդ փողոց 47/1 հասցեում «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 27012023-07-0140, գաղտնաբառ՝ MADBMUKHCBRT) բնակավայրերի նպատակային նշանակության 0.015հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի, իսկ բնակելի կառուցապատման գործառնական նշանակությունը՝ կապի, բջջային կապի կայան կառուցելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

20 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 սեպտեմբերի 2023թվականի N 1076

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.02748ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն և N1920-Ն որոշումները, Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի Հրազդան համայնքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ 2023 թվականի օգոստոսի 1-ի N74 դրական եզրակացությունը, Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ի N 160 որոշումը և «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերության տեխնիկական տնօրեն Գ. Գևորգյանի 2022 թվականի դեկտեմբերի 15-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ Հրազդան համայնքի գյուղ Լեռնանիստ 3-րդ թաղամաս 32/1 հասցեում «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 25112022-07-0068, գաղտնաբառ՝ BZZDFZTKLC4A) բնակավայրերի նպատակային նշանակության 0.02748հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի, իսկ բնակելի կառուցապատման գործառնական նշանակությունը՝ կապի, բջջային կապի կայան կառուցելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

20 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան